**Արձանագրություն N 2-1**

**ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/7 ծածկագրով ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան

15.05.2026թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Աչոյան

Անդամներ՝ Էդ. Առուստամյան
Հ. Մնացականյան
Գ. Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանուչարյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Ա. Խաչատրյանը

**1. Գնման ընթացակարգի հայտերի բացման օրվա և ժամի, ինչպես նաև՝ հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**

---------------------------------------------------------------------

(Ա. Աչոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել,

բ) գնման ընթացակարգի հայտերը բացվել են էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով 2026 թվականի մայիսի 11-ին ժամը 11:00-ին,

գ) գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնման գին | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Բաղրամյանշին» ԲԲԸ | 3 334 004 030 | 2 375 000 000 | 475 000 000 | 2 850 000 000 |
| 2 | «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ, «OUS-ՇԻՆ» ՍՊԸ և «ՄԱՍԻՍ» ՍՊԸ կոնսորցիում | | 2 407 406 666.67 | 481 481 333.33 | 2 888 888 000 |
| 3 | «Ավանգարդ շին» ՍՊԸ, «Էկո Սիթի Գրուպ» ՍՊԸ և «Դ և Ս Քոնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիում | | 2 472 715 000 | 494 543 000 | 2 967 258 000 |
| 4 | «Գոհարիկ» ՍՊԸ | | 2 542 178 069 | 508 435 614 | 3 050 613 683 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5 | «ՇԻՆ» ՍՊԸ և «Գառնի Շին» ՍՊԸ կոնսորցիում | 2 619 971 497 | 523 994 299 | 3 143 965 796 |

1.2 Մասնակիցները հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

1.3 «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից հայտի ապահովումը ներկայացվել է հրավերով սահմանված չափից պակաս (1.5 դրամ): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցն է և վերջինիս հետ պայմանագիր կնքելիս հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցի գնային առաջարկի համեմատ ՀՀ պետական բյուջեում տնտեսում է լինում՝ գնահատող հանձնաժողովը որոշեց չմերժել «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հայտը: ՀՀ քաղաքաշինության կոմիտեն պարտավոր է իր գործողություններն իրականացնել՝ պահպանելով պետության շահերը, ուստի տվյալ դեպքում գնման ընթացակարգի պահանջը փաստացի կատարված լինելու պայմաններով ձևական ՀՀ պետական բյուջեից կծախսվի 38 888 000 դրամ ավել: Իսկ հայտի ապահովման երաշխիքի գումարը 1.5 դրամ պակաս լինելու հիմքով «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հայտը մերժելու դեպքում ՀՀ պետական բյուջեից ավել գումար կծախսվի:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:*

**2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, գործունեության հասցեները, կապի միջոցները, էլ. հասցեները**

---

(Ա. Աչոյան)

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցե | Կապի միջոց | Էլեկտրոնային փոստի հասցե |
|---|---|---|---|---|
| 1 | «Բաղրամյանշին» ԲԲԸ | Ք. Երևան, Կ. Ուլնեցու 31/2 | 093 40 20 85 | info@bshin.am |
| 2 | «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ, «OUS-ՇԻՆ» ՍՊԸ և «ՄԱՍԻՍ» ՍՊԸ կոնսորցիում | ք. Վանաձոր, Հյուսիսային 14<br>ք. Սպիտակ, Թորոսյան 8<br>գ. Ոսկեվան 2փ.,17 | 055-09-49-39<br>094 23 58 58<br>098 68 87 20 | anna2018.92@mail.ru<br>ost-shinllc@mail.ru<br>samvelovna.97@mail.ru |
| 3 | «Ավանգարդ շին» ՍՊԸ, «Էկո Սիթի Գրուպ» ՍՊԸ և «Դ և Ս Քոնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիում | Ք. Երևան, Լենինգրադյան փողոց 23/7<br>Ք. Աշտարակ Ն. Աշտարակեցու փ. 2<br>Ք. Երևան, Դավիթ Բեկ 1/25 | 044 20 10 02 | baghdasaryan@inbox.ru |
| 4 | «Գոհարիկ» ՍՊԸ | Գ. Գետափ | 094 92 72 90 | goharik.spy@mail.ru |
| 5 | «ՇԻՆ» ՍՊԸ և «Գառնի Շին» ՍՊԸ կոնսորցիում | ք. Երևան, Եկմալյան փ., 2. 6/55<br>գ. Գառնի, Վ. Համբարձումյան փ., տ. 29 | 055 90 00 50<br>077 60 80 35 | aramarami2020@mail.ru<br>vahag-222@mail.ru |

**3. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին**

---

(Ա. Աչոյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 67-րդ և հրավերի 8.21 կետերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի 11.05.2026թ. պատճառաբանված որոշումը՝ հրավերով սահմանված հավելված N1.2-ի և հավելված N1.3-ի համաձայն մասնակցի կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց հարցում կատարել՝

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջինիս կողմից վերահսկվող եկամուտների գծով ընդհանուր (բոլոր հարկատեսակների հանրագումար) հինգ հարյուր հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չունենալու մասին,

2. ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ քաղաքաշինության կոմիտե, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ,

Երևանի քաղաքապետարան՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջին 5 տարիների ընթացքում տասը միլիոն ՀՀ դրամի չափով նախկին պայմանագրային պարտավորությունների ընթացքում պատվիրատուի կողմից սահմանված տույժ և (կամ) տուգանք չունենալու մասին:

3.2 Հայտերի գնահատման նիստը հրավիրել իրավասու մարմինների կողմից եզրակացությունները ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:30-ին, ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ-0:*

## 4. Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի ուսումնասիրության մասին

(Ա. Աչոյան)

4.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ առողջապահության և ՀՀ պաշտպանության նախարարություններից գրությունները չեն ստացվել, իսկ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից, ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից, ՀՀ քաղաքաշինության կոմիտեից, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամից, Երևանի քաղաքապետարանից ստացվել են պատասխան գրությունները:

4.2 Գնման ընթացակարգի մասնակիցներ՝ «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի, «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ, «OUS-ՇԻՆ» ՍՊԸ և «ՄԱՍԻՍ» ՍՊԸ կոնսորցիումի, «Ավանգարդ շին» ՍՊԸ, «Էկո Սիթի Գրուպ» ՍՊԸ և «Դ և Ս Քոնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումի, «Գոհարիկ» ՍՊԸ-ի, «ՇԻՆ» ՍՊԸ և «Գառնի Շին» ՍՊԸ կոնսորցիումի հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

**«Բաղրամյանշին» ԲԲԸ**

- Հայտով ներկայացված Աբովյանի թիվ 2 հիմնական դպրոցի կառուցման, ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/4-2, ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/22, Վայոց ձորի մարզային հիվանդանոցի կառուցման պայմանագրերը ոչ ամբողջական են:

**«ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ, «OUS-ՇԻՆ» ՍՊԸ և «ՄԱՍԻՍ» ՍՊԸ կոնսորցիում**

- Կոնսորցիումի պայմանագրի համաձայն նմանատիպ փորձառություն (նմանատիպ պայմանագրեր) պետք է ներկայացնի միայն գործընկեր 1-ը («ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն), սակայն հայտով նմանատիպ պայմանագրեր ներկայացրել են նաև գործընկեր 2-ը («OUS-ՇԻՆ» ՍՊԸ-ն) և գործընկեր 3-ը («ՄԱՍԻՍ» ՍՊԸ-ն): ՀՏԶՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2025/28 պայմանագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին, այն վերանորոգման պայմանագիր է, իսկ ըստ հրավերի պահանջի համանման (նմանատիպ) պայմանագիր է համարվում արդյունաբերական և քաղաքացիական նշանակության բարձր ռիսկայնության աստիճանի (4-րդ կատեգորիա) դասակարգում ունեցող օբյեկտների կառուցման կամ վերակառուցման աշխատանքների իրականացման նպատակով կնքված և ավարտված պայմանագիրը: Անհրաժեշտ է ներկայացնել այլ նոր համանման պայմանագիր:

**«Ավանգարդ շին» ՍՊԸ, «Էկո Սիթի Գրուպ» ՍՊԸ և «Դ և Ս Քոնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիում**

- Հայտով ներկայացվել է երկու նմանատիպ պայմանագիր, որոնց հանրագումարը պակաս է գնման գնի 60%-ից: Ըստ հրավերի պահանջի՝ պետք է ներկայացվի առնվազն չորս պայմանագրի պատճեններն իրենց ավարտական ակտերով: Հայտով ներկայացված ՀՀԳՄՎՀ-ԲՄԱՇՁԲ-23/110-1 պայմանագրի ռիսկայնության աստիճանը ըստ ներկայացրած փաստաթղթերի հնարավոր չէ գնահատել: Նշված պայմանագիրը գնահատելու համար անհրաժեշտ է ներկայացնել հիմնավորող փաստաթղթեր կամ ներկայացնել այլ նոր համանման պայմանագիր՝ հիմք ընդունելով Ձեր համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի 1.4.1 կետի պայմանը:

**«Գոհարիկ» ՍՊԸ**

- Դիմում-հայտարարության մեջ մասնակցի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը թերի է: Ըստ հրավերի պահանջի՝ պետք է ներկայացվի առնվազն չորս պայմանագրի պատճեններն իրենց ավարտական ակտերով: Կատարված նմանատիպ պայմանագրերի հանրագումարը չպետք է պակաս լինի գնման գնի 60%-ից, իսկ մեկ պայմանագրի մասով՝ ոչ պակաս գնման գնի 20%-ից: Հայտով նմանատիպ պայմանագրերը և ավարտական ակտերը չեն ներկայացվել:

**<u>«ՇԻՆ» ՍՊԸ և «Գառնի Շին» ՍՊԸ կոնսորցիում</u>**

- հայտով ներկայացված նմանատիպ պայմանագրերի հանրագումարը պակաս է գնման գնի 60%-ից: Հիմք ընդունելով Ձեր համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի 1.2.1 կետի պայմանը՝ անհրաժեշտ է ապահովել հրավերի նմանատիպ պայմանագրերի հանրագումարի 60%-ին վերաբերող պահանջը:

4.3 Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին, «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ, «OUS-ՇԻՆ» ՍՊԸ և «ՄԱՍԻՍ» ՍՊԸ կոնսորցիումին, «Ավանգարդ շին» ՍՊԸ, «Էկո Սիթի Գրուպ» ՍՊԸ և «Դ և Ս Քոնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումին, «Գոհարիկ» ՍՊԸ-ին, «ՇԻՆ» ՍՊԸ և «Գառնի Շին» ՍՊԸ կոնսորցիումին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 18.05.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումները ներկայացվելու դեպքում, հայտերը կգնահատվեն բավարար, հակառակ դեպքում հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն: Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/7 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի a.manucharyan@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

### 5. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---

(Ա. Աչոյան)

5.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունը մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 19.05.2026թ. ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հացեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------- Ա. Աչոյան

Անդամներ՝ ---------------------------------------- Էդ. Առուստամյան

---------------------------------------- Հ. Մնացականյան

---------------------------------------- Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------- Ա. Մանուչարյան

## ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄ

**ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/7 ծածկագրով ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

11.05.2026թ.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ և հրավերի 8.21 կետերը՝ հրավերով սահմանված N 1.2 և N 1.3 հավելվածների համաձայն մասնակցի կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց հարցում կատարել

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջինիս կողմից վերահսկվող եկամուտների գծով ընդհանուր (բոլոր հարկատեսակների հանրագումար) հինգ հարյուր հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ մասին, չունենալու

2. ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, ՀՀ քաղաքաշինության կոմիտե, ՀՀ պաշտպանության հիմնադրամ, Երևանի քաղաքապետարան՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջին 5 տարիների ընթացքում տասը միլիոն ՀՀ դրամի չափով նախկին պայմանագրային պարտավորությունների կատարման ընթացքում պատվիրատուի կողմից սահմանված տույժ և (կամ) տուգանք չունենալու մասին:

Գնահատող հանձնաժողովը մասնակցի հայտը գնահատելու է՝ հիմք ընդունելով իրավասու մարմինների կողմից ստացված տեղեկատվությունը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------------- Ա. Աչոյան

Անդամներ՝ ---------------------------------------------- Էդ. Առուստամյան

---------------------------------------------- Հ. Մնացականյան

---------------------------------------------- Գ. Գևորգյան